

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՍԱԿԱԳՆԵՐ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, բացառությամբ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց գծով միջնորդավճարների, որոնք կարող են գանձվել նաև արտարժույթով:
2. Արտարժույթի գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի անկանխիկ առքի փոխարժեքը:
3. Բանկում հաճախորդի հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը փոխարկել արտարժույթով ունեցած միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:
4. Իրավաբանական անձանց համար սահմանված սակագները տարածվում են նաև ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված անհատ ձեռնարկատերերի վրա:
5. Բանկային գործառնությունների կատարման հետ կապված փոստային, հեռագրային, հեռախոսային, տելեքսային և ֆաքսիմիլային կապի ծախսերը, ինչպես նաև երրորդ Բանկի ծախսերը գանձվում են լրացուցիչ:
6. Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:
7. Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ՝ Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:
8. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
9. Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի միջոցով քարտերի սպասարկման ոլորտում Բանկի հետ համագործակցող կազմակերպություններից գանձվում են Բանկում հաճախորդների համար նախատեսված միջնորդավճարները:
10. Ծառայությունների դադարեցման դեպքում մինչ այդ վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:

2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

	Միջնորդավճար
1. Հաշվի բացում ծառայությունների փաթեթով (փաթեթը ներառում է ՀՀ դրամով հաշիվ և/կամ արտարժույթով հաշիվներ, Ինտերնետ Բանկ/ Մոբայլ Բանկ համակարգ՝ անվճար, մեկ VISA Business կամ MasterCard Business տեսակի վճարային քարտ՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի) ¹	40,000 ՀՀ դրամ
2. Հեռավար եղանակով՝ Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի էլեկտրոնային միջոցով, հաշվի բացում՝ ծառայությունների փաթեթով ¹ : Փաթեթը ներառում է. • ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով կամ ՌԴ ռուբլով հաշիվ(ներ)՝ յուրաքանչյուր արժույթով մեկ հաշվի հնարավորությամբ, • Ինտերնետ Բանկ/Մոբայլ բանկինգ՝ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կողմից օգտագործմամբ, • Թվով մինչև երեք վճարային քարտ(եր)՝ VISA բիզնես, MasterCard բիզնես և/կամ ArCa մաքսային տեսակի	Անվճար
3. Հաշվի (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով, այդ թվում՝ առարկայագուրկ ոսկով (999.9) մետաղական) բացում ²	Անվճար
4. Հաշվի նվազագույն մնացորդ	Չի կիրառվում
5. Հաշվի վարում ³	
5.1. Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար	
5.1.1. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներով նվազագույնը 300,000 ՀՀ դրամին համարժեք շրջանառության առկայության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 100,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	Անվճար

¹ Միայն Ռեզիդենտ Իրավաբանական անձանց համար: Փաթեթի մեկ կամ մի քանի ծառայությունից հրաժարվելու դեպքում փաթեթի արժեքը չի փոխվում, իսկ հրաժարված ծառայությունների հետագայում մատուցման համար գործում են տվյալ ծառայությունների համար սահմանված միջնորդավճարները: Փաթեթը տարածվում է գործող հաճախորդների վրա նույնպես:

² Բանկային ծառայություններից օգտվելիս անհրաժեշտ է բացել ՀՀ դրամով բանկային հաշիվ:

³ Հաճախորդի որևէ բանկային հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում հաճախորդի բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության և մնացորդների գրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվները փակվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում, բացառությամբ այն հաշիվների, որոնք անհրաժեշտ են Բանկի կողմից հաճախորդին մատուցվող այլ ծառայության սպասարկման համար:

Հաշվի վարման միջնորդավճար չի գանձվում, եթե հաճախորդն ունի միայն բրոքերային և/կամ բանկային հաշիվ, որը բացվել և սպասարկվում է պահատուփի ծառայության տրամադրման համար:

Հաշվի վարման միջնորդավճար չի գանձվում, եթե հաճախորդն ունի միայն բանկային հաշիվ, որը բացվել և սպասարկվում է 2022թ. հուլիսի 13-ից հետո Առևտրի/սպասարկման կետին պատկանող ՀԴՄ-ի միջոցով ակտիվացված POS ծառայության համար:

5.1.2. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներով 300,000 ՀՀ դրամից փոքր շրջանառության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 100,000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար
5.2. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար ⁴	25,000 ՀՀ դրամ ամսական
5.3. Հաճախորդի դիմումի համաձայն հաճախորդի հաշիվների փակում	
5.3.1. Հաշիվը բացելուց հետո մեկ տարվա ընթացքում (միաժամանակ մեկից ավելի հաշիվներ փակելու դեպքում գանձվում է մեկ հաշվի փակման համար նախատեսված միջնորդավճար)	10,000 ՀՀ դրամ
5.3.2. Հաշիվը բացելուց մեկ տարի հետո	Անվճար
6. Հաշվի հեռավար սպասարկում⁵	
6.1. Բանկ-Հաճախորդ համակարգով	10,000 ՀՀ դրամ ամսական (գանձումը իրականացվում է եռամսյակային կտրվածքով, օրացուցային եռամսյակին հաջորդող ամսվա առաջին շաբաթվա ընթացքում)
6.2. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով	
6.2.1. Հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու իրավունքով	Անվճար
6.2.2. Մինչև 2 օգտագործող գրանցելու դեպքում	
6.2.2.1. Գործարքներ հաստատելու համար մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքերից որևէ երկուսը կամ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման երկու կողմ ⁶	Տարեկան 10,000 կամ Ամսական 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
6.2.3. Լրացուցիչ օգտագործող գրանցելու դեպքում (3-րդ օգտագործողից սկսած) ⁶	1,000 ՀՀ դրամ ամսական՝ ներառյալ համակարգ մուտքագրվելու և գործարքներ հաստատելու համար մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքերից որևէ մեկը կամ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման մեկ կողմ՝ ըստ հաճախորդի ընտրության

⁴ Հաճախորդի հետ երկկողմանի համաձայնագրի հիմքով հաճախորդից կարող է գանձվել սահմանված միջնորդավճարից տարբեր վճարներ:

⁵ Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

⁶ Առաջին գանձումը կատարվում է ծառայության/սարքի, կողի/տրամադրման պահին, իսկ հաջորդող ամիսների համար գանձումները՝ յուրաքանչյուր ամսվա համապատասխան ամսաթվին/առաջին գանձման ամսաթվին համապատասխանող ամսաթվին/, ընդ որում, եթե գանձման օրը համընկնում է համապատասխան ամսաթվի չունեցող ամսվան, ապա գանձումը կատարվում է այդ ամսվա վերջին օրը:

Մինչև 01.09.2019թ-ը ներառյալ տվյալ ծառայությունից օգտվող հաճախորդների նկատմամբ վճարի գանձման վերը նկարագրված կարգը կիրառվելու է 01.09.2019թ-ից՝ հետագա բոլոր ամիսների համար վճարման ամսաթիվ դիտարկելով համապատասխան ամսվա 1-ը:

6.2.4. Ծածկագիր գներացնող սարքի տրամադրում (կորցնելու կամ վնասելու դեպքում), սարքի տեսակի փոխարինում	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
6.2.5. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգի գաղտնաբառի վերականգնում Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7. Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրում	
7.1. Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	Անվճար
7.2. 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար
7.3.1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի ուղարկում հաճախորդի էլեկտրոնային հասցեին առանց դրոշմակնիքի	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար
7.4. SWIFT MT940 ֆորմատի քաղվածքների տրամադրում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
7.5. Տեղեկանքների տրամադրում	
7.5.1. 3 ամիս և ավել հաշվետեք հաճախորդներին	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7.5.2. Մինչև 3 ամսվա հաճախորդներին	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7.5.3. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով պատվիրելու դեպքում ⁷	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7.6. Տեղեկանք-երաշխիքներ	10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7.7. Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում	10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7.8. Քաղվածքի առաքում	
7.8.1. Էլեկտրոնային եղանակով	Անվճար
7.8.2. Փոստով՝ ՀՀ տարածքում ⁸	Ամսական 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

⁷ Տեղեկանքի հայտը պետք է ներկայացված լինի առնվազն մեկ բանկային օր առաջ:

⁸ Միջնորդավճարը գանձվում է քաղվածքը ստանալու ամսվա դիմաց մինչև այդ ամսվա հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

7.8.3. Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս ⁹	Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի
7.9. Հաշվի շրջանառության վերաբերյալ հեռախոսով տեղեկատվության տրամադրում	10,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ
7.10. Գործառնական SMS հաղորդագրություններ	
7.10.1. Հաշվի մնացորդ օրական պարբերականությամբ	3,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ
7.10.2. Հաշվի մնացորդ նվազագույնը շաբաթական պարբերականությամբ	1,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ
7.10.3. Հաշվով վերջին գործառնականությունների վերաբերյալ համառոտ քաղվածք	3,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ
7.11. Տեղեկատվական SMS հաղորդագրություններ	
7.11.1. Բանկի փոխարժեքներ յուրաքանչյուր փոփոխության դեպքում, 7.11.1.1. Կանխիկ փոխարժեք, 7.11.1.2. Անկանխիկ փոխարժեք	10,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ
7.11.2. Օրական կտրվածքով ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արտաժողովային շուկայի միջին փոխարժեք	3,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ

3. ԿԱՆԽԻԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Միջնորդավճար
1. Կանխիկ միջոցների մուտքագրում հաճախորդի հաշվին ¹⁰	
1.1. ՀՀ դրամ	
1.1.1. Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվին	0.3%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
1.1.2. Այլ հաճախորդների հաշվին	Անվճար
1.2. ԱՄՆ դոլար, եվրո ¹¹	Անվճար
1.3. ՌԴ ռուբլի, բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ և այլ արտարժույթ ¹²	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափի (դրույքաչափի մասին տեղեկությունները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում)

⁹ Առաքումը կատարվում է ռեզուլյար փոստի միջոցով:

¹⁰ Միաժամանակ 10 և ավելի կանխիկ մուտքի գործարք կատարելու դեպքում իրավաբանական անձանցից գանձվում է միջնորդավճար 50 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր մուտքի համար: Մուտքի հանձնարարականը էլեկտրոնային եղանակով խմբային ներկայացնելու դեպքում գանձվում է 20 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր մուտքի համար:

¹¹ 500 եվրո արժողությամբ թղթադրամների հաշվին մուտքագրման համար կիրառվում է 1% միջնորդավճար: 500 եվրո արժողությամբ թղթադրամներ ընդունվում են միայն Կամար մասնաճյուղում և Գլխամասային գրասենյակում:

¹² Ժամկետային ավանդ ներդնելիս՝ կանխիկի մուտքագրումը կատարվում է անվճար: Ավանդի ներդրումից հետո 30 օրվա ընթացքում ժամկետից շուտ ընդհատվող ավանդների դեպքում ավանդը մարելիս գանձվում է միջնորդավճար՝ ավանդի փաստացի մարման օրվա դրությամբ Բանկում գործող կանխիկի մուտքի դրույքաչափի չափով:

2. Կանխիկ տրամադրում ¹³	
2.1. Հաճախորդի հաշվին կանխիկ մուտքագրված միջոցներից	Անվճար
2.2. Հաճախորդի հաշվին անկանխիկ մուտքագրված միջոցներից ¹⁴	

¹³ Կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է ստորև ներկայացված աղյուսակի հիման վրա.

Գրասենյակ	Կանխիկ տրամադրում առանց նախապես ներկայացված հայտի	Կանխիկ տրամադրում նախապես ներկայացված հայտի հիման վրա		
	Պահանջվող կանխիկ գումար (տրամադրվում է հայտը ներկայացնելու գործառնական օրվա ընթացքում)	Պահանջվող կանխիկ գումար	Կանխիկ գումարի տրամադրման ժամկետ մինչև 13:00 հայտ ներկայացնելու դեպքում	Կանխիկ գումարի տրամադրման ժամկետ 13:00-ից հետո հայտ ներկայացնելու դեպքում
Կամար մասնաճյուղ/Գլխամասային գրասենյակ	Մինչև 30 մլն ՀՀ դրամ, 50,000 ԱՄՆ դոլար, 30,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	30 մլն ՀՀ դրամից, 50,000 ԱՄՆ դոլար, 30,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 3 գործառնական օրվա ընթացքում	Մինչև 4 գործառնական օրվա ընթացքում
Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղեր (բացառությամբ Կամար մ/ճ-ի)	Մինչև 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար, 15,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	20 մլն ՀՀ դրամից, 25,000 ԱՄՆ դոլարից, 15,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 3 գործառնական օրվա ընթացքում	Մինչև 4 գործառնական օրվա ընթացքում
Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղեր	Մինչև 10 մլն ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար, 10,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	10 մլն ՀՀ դրամից, 10,000 ԱՄՆ դոլարից, 10,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 5 գործառնական օրվա ընթացքում	

Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է Բանկում առկա բոլոր հաշիվները և հաճախորդի հաշիվների մնացորդը փոքր է սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարից, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:

¹⁴ Կանխիկ տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.

- ✓ 91 օր և ավել ժամկետով ներդրված, ինչպես նաև 31 օրով ներդրված և 3 անգամ անընդմեջ երկարաձգված ավանդների գումարների դեպքում (բացառությամբ ավանդատուի նախաձեռնությամբ պայմանագրի ժամկետից շուտ դադարեցվող ավանդների);
- ✓ նվազեցման հնարավորություն ունեցող ավանդների պայմաններով նախատեսված չափով նվազեցվող գումարների դեպքում;
- ✓ պարտատոմսերի գումարների դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում;
- ✓ ավանդների տոկոսագումարների և պարտատոմսերի արժեկտրոնների վճարման դեպքում:

2.2.1. ՀՀ դրամ	0.2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.2.2. ՌԴ ռուբլի	0.3%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.2.3. Այլ արտարժույթ	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափի (դրույքաչափի մասին տեղեկությունները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում)
3. 500 եվրո արժողությամբ թղթադրամների փոխանակում այլ թղթադրամներով կամ փոխարկում այլ արժույթի ¹⁵	1%
4. Արտարժույթի մետաղադրամների ընդունում	
4.1. Եվրո (ընդունվում են 1 Եվրո և ավելի մետաղադրամներ)	Ընդունվող գումարի 20%
4.2. ԱՄՆ դոլար և այլ արտարժույթների մետաղադրամներ	Չի ընդունվում
5. Հնամաշ դրամանիշերի փոխանակում	
5.1. ՀՀ դրամ	Անվճար
5.2. Եվրո, ԱՄՆ դոլար	3%
5.3. ՌԴ ռուբլի	2%
5.4. Բրիտանական ֆունտ ստեռլինգ, Շվեյցարական ֆրանկ, Կանադական դոլար, Ավստրալական դոլար	5%
6. Կանխիկ արժույթի ստուգում և փաթեթավորում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, բրիտանական ֆունտ, ՌԴ ռուբլի և շվեյցարական ֆրանկ)	Ստուգվող և փաթեթավորվող գումարի 0.1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
7. Դրամարկղային չեկերի տրամադրում	
7.1. Չեկային գրքույկ (25 թերթ)	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7.2. Չեկի մեկ թերթ	250 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

4. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ¹⁶

Բանկի կողմից վարկի տրամադրումից առաջացած գումարներից կիրառվում է նշված սակագինը, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին չի սահմանվում:
Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի գործողությունները արտացոլող այդ նպատակով բացված հատուկ հաշվից ելքի դեպքում միջնորդավճար չի գանձվում:

¹⁵ 500 եվրո արժողությամբ թղթադրամներ ընդունվում են միայն Կամար մասնաճյուղում և Գլխամասային գրասենյակում:

¹⁶ Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականները ընդունում և փոխանցում է համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի՝ հաճախորդի հաշվին փոխանցման ենթակա գումարի փաստացի առկայության պարագայում.

	Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ				Ինտերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ/ Բանկ-Հաճախորդ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ (բացառությամբ ներբանկային փոխանցումների, որոնք փոխանցվում են ոչ ուշ քան հաջորդ բանկային օրը)			
	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում
ՀՀ դրամ	Մինչև ժամը 13:00	Նույն բանկային օրը	Ժամը 13:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

	Միջնորդավճար
1. Փոխանցումներ ՀՀ դրամով	
1.1. Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվին	0.3%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
1.2. Այլ փոխանցումներ	
1.2.1. Ներբանկային	Անվճար
1.2.2. ՀՀ բանկեր ¹⁷	
1.2.2.1. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Բնտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում	Անվճար
1.2.2.2. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում՝ Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	200 ՀՀ դրամ
1.2.2.3. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	100 ՀՀ դրամ
1.3. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
1.4. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից	200 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
2. Փոխանցումներ արտարժույթով¹⁸	
2.1. Ներբանկային	Անվճար

Այլ արտարժույթ, այդ թվում՝ առարկայա-գույրկ ոսկի	Մինչև ժամը 15:00	Նույն բանկային օրը	Ժամը 15:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
---	------------------	--------------------	--------------------	---------------------	------------------	--------------------	--------------------	---------------------

Քարտային հաշիվներից փոխանցումներ կատարելիս 4-րդ գլխով սահմանված փոխանցումների միջնորդավճարներին գումարվում են նաև քարտային հաշիվներից փոխանցումների համար սահմանված միջնորդավճարները (տե՛ս Քարտերի տրամադրման և սպասարկման պայմաններ):

¹⁷ Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թղթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չգերազանցող վճարման հանձնարարականների (14.00-ից մինչև 15.15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարարականի համար: Սույն սակագինը կիրառվում է նաև 50 մլն ՀՀ դրամը գերազանցող յուրաքանչյուր վճարման հանձնարարականի դեպքում, եթե Բանկը հնարավորություն ունի բացառության կարգով վերոնշյալ պայմաններով նույն բանկային օրը կատարել վճարման հանձնարարականը:

ՀՀ ԿԲ-ում բացված հաշիվներին կատարվող փոխանցումների դեպքում սույն սակագինը չի կիրառվում:

¹⁸ Այն դեպքում, երբ փոխանցվող գումարը կազմում է 3 մլն և ավել ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արտարժույթ, փոխանցումները կատարվում են միայն 2.2, 2.3.2, 2.4.2 տարբերակներով՝ 1,000,000 ՀՀ դրամ միջնորդավճարով:

Այլ բանկ/եր/ում առկա վարկային պարտավորությունները Բանկ տեղափոխելու շրջանակում ավտոմատ եղանակով կատարվող արտարժույթով փոխանցումները Բանկի կողմից իրականացվում են անվճար:

Միջինական, կուբայական բանկեր և դրանց մասնաճյուղեր հասցեագրվող փոխանցումները կատարվում են ծախսերի 2.3.1 և 2.4.1 կետերում նշված տարբերակներով:

2.2. ՌԴ ռուբլով	
2.2.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	3,000 ՀՀ դրամ
2.2.2. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	0.1 %, նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 30,000 ՀՀ դրամ
2.3. ԱՄՆ դոլարով, եվրոյով ¹⁹	
2.3.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ
2.3.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	
2.3.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում	0.15%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.3.2.2. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.3.3. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	2.3.2 կետով սահմանված միջնորդավճար + 10,000 ՀՀ դրամ
2.4. Բանկի կողմից գնանշվող այլ արտարժույթներով	
2.4.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ
2.4.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը հետագայում փոխհատուցվում են հաճախորդին կողմից ²⁰	
2.4.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում	0.15%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.4.2.2. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.5. Բանկում չգնանշվող արժույթներով գումարի փոխանցում ²¹	0.2%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ
2.6. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար

¹⁹ ՀՀ ԿԲ-ում բացված հաշիվներին կատարվող փոխանցումների դեպքում փոխանցման միջնորդավճար չի գանձվում:

²⁰ Ամերիաբանկի միջնորդ բանկերի կողմից ներկայացված ծախսերը ենթակա են փոխհատուցման հաճախորդի հաշվից:

²¹ Փոխանցումը կատարվում է ԱՄՆ դոլարով, իսկ ստացողի հաշվին մուտքագրվում է հաճախորդի նախընտրած արտարժույթով:

2.7. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
2.8. SWIFT համակարգի միջոցով արտարժույթով ստացված չպարզաբանված գումարների հետ վերադարձ ²²	30 ԱՄՆ դոլար/30 եվրո կամ համարժեք այլ արժույթ
3. Փոխանցումներ առարկայագուրկ ոսկով (999.9)	
3.1. Ներբանկային	Անվճար
3.2. ՀՀ այլ բանկեր և արտերկիր	20,000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր մուտքի և ելքի համար)
4. Ինտերնետ բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգով բանկային հաշվից քարտի համարով կատարվող փոխանցում²³	0.3%
5. Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում²⁴	
4.1. ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
4.2. Արտարժույթ ²⁵	25,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
6. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում²⁶	
5.1. ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
5.2. ՌԴ ռուբլի ²⁵	10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
5.3. Այլ արտարժույթ ²⁵	25,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7. Հաճախորդի կողմից թերի կամ սխալ ներկայացված տվյալների արդյունքում (ներառյալ շահառուի համապատասխան հաշիվը փակված լինելու դեպքում) վճարման հանձնարարականի հետ վերադարձ թղթակից բանկի կողմից	
6.1. ՀՀ դրամ	Անվճար
6.2. ՌԴ ռուբլի ²⁵	25,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
6.2.1. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարականի դեպքում ²⁵	10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
6.3. Այլ Արտարժույթ ²⁵	25,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

²² Միջնորդավճարը գանձվում է հետ փոխանցվող գումարից սխալ, թերի լրացրած կամ Պայմաններում սահմանված գումարի մուտքի կասեցման դեպքերում:

²³ Շահառուի քարտին գումարը ակտիվանում է անմիջապես, իսկ հաշվին՝ Ամերիաբանկի քարտերի դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը, իսկ այլ բանկերի քարտերի դեպքում՝ համաձայն տվյալ բանկի պայմանների:

²⁴ Միջնորդավճարը չի գանձվում այն դեպքում, երբ հաճախորդի հաշվից փոխանցման գումարը չեղարկման հայտ ներկայացնելու պահին ելքագրված չէ:

²⁵ Ի լրումն վերոնշյալ սակագնի՝ երրորդ կողմի ներկայացված ծախսերը նույնպես ենթակա են փոխհատուցման հաճախորդի կողմից:

²⁶ Միջնորդավճարը չի գանձվում, եթե գումարը բանկից դուրս չի եկել:

8. Անկանխիկ արտարժույթի մուտքագրում հաշվին	Անվճար
--	--------

5. ԷՍՔՐՈՈՒ ՀԱՇՎԻ ԲԱՅՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

	Միջնորդավճար
1. Հաշվի բացման և սպասարկման միջնորդավճար	Մինչև 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարի գործարքների դեպքում՝ միանվագ 0,3% էսքրոու գումարից, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ, առավելագույնը 1,000,000 ՀՀ դրամ; 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարը գերազանցող գործարքների դեպքում՝ պայմանագրային՝ նվազագույնը՝ 1,000,000 ՀՀ դրամ
2. Էսքրոու պայմանագրում պայմանների փոփոխություն	25,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագիր կնքելու համար
3. Հաշվի փակում	Անվճար
4. Հաշվից գումարի կանխիկացում	Համաձայն գլուխ 3-րդի («Կանխիկով կատարվող գործառնություններ»)
5. Հաշվից գումարի փոխանցում	Համաձայն գլուխ 4-րդի («Փոխանցումներ»)

6. ԱՆՀՍՏԱԿԱՆ ՊԱՀՍՈՒՓԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

Անհատական պահատուփի օգտագործման սակագներ

(ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ)

Անհատական պահատուփի տեսակները			Սակագներ			
	«Կոմիտաս» մ/ճ	«Սայաթ Նովա» մ/ճ «Կամար» մ/ճ և «Էջմիածին» մ/ճ	1 ամիս	3 ամիս	6 ամիս	1 տարի
Փոքր	250մմ*350մմ*90մմ	300մմ*100մմ*460մմ	15,000	20,000	30,000	35,000
Միջին	250մմ*350մմ*190մմ	300մմ*200մմ*460մմ	20,000	30,000	40,000	60,000
Մեծ	250մմ*350մմ*290մմ	600մմ*200մմ*460մմ	25,000	40,000	50,000	80,000
Շատ մեծ	-	600մմ*900մմ*460մմ	50,000	80,000	100,000	160,000

Անհատական պահատուփի կողպեքի փոփոխության և նոր բանալու տրամադրման համար Պահատուն պարտավոր է Պահառուին վճարել 25,000 ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ):

7. ՈՍԿՈՒ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ

Ոսկու ստանդարտացված ձուլակտորների վաճառքն իրականացվում է 1ունցիա, 5գ, 10գ, 20գ, 50գ, 100գ, 1000գ ոսկու քաշերով: Ձուլակտորի հետ հաճախորդին տրամադրվում է որակի սերտիֆիկատ:

Ըստ ձուլակտորների քաշային մեծության կատարվում է կանխիկ ոսկու գնանշում, սահմանվում են փոխաժեքներ, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքի գլխավոր էջում www.ameriabank.am:

1. Ոսկու ստանդարտացված ձուլակտոր առանց փաթեթավորման	Տվյալ քաշի համար սահմանված կանխիկ ոսկու փոխարժեք
2. Ոսկու ստանդարտացված ձուլակտոր փաթեթավորմամբ	Տվյալ քաշի համար սահմանված կանխիկ ոսկու փոխարժեք +3,000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ

8. ԱՌԵՎՏՐԻ/ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏՈՒՄ POS ՏԵՐՄԻՆԱԼԻ ԵՎ ՀԱՇՎԻԶ-ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- POS տերմինալով անկանխիկ գործարքների սակագները ըստ սպասարկման կետերի սահմանվում են պայմանագրային հիմունքներով:
- Այն դեպքում, երբ Առևտրի/սպասարկման կետում POS տերմինալով իրականացված ամսական շրջանառությունը փոքր է 1,000,000 ՀՀ դրամից, Բանկի կողմից գանձվում է սպասարկման վճար՝ ամսական 5,000 ՀՀ դրամի չափով՝ ներառյալ հարկերը:
- Այն դեպքում, երբ Առևտրի/սպասարկման կետում Բանկին պատկանող հաշվիչ-դրամարկղային մեքենայով (ՀԴՄ) իրականացված անկանխիկ գործարքների ամսական շրջանառությունը փոքր է 500,000 ՀՀ դրամից, Բանկի կողմից գանձվում է սպասարկման վճար՝ ամսական 5,000 ՀՀ դրամի չափով՝ ներառյալ հարկերը:
- ՀԴՄ-ի միջոցով POS ծառայության ակտիվացումն անվճար է, սակայն հետագայում որևէ հիմքով ՀԴՄ սարքի փոխարինումը կարող է առաջացնել Առևտրի/սպասարկման կետի համար լրացուցիչ ծախսեր:
- Սույն կետում նշված սակագները գործում են այն Առևտրի/սպասարկման կետերի համար, որոնցում POS ծառայությունը Բանկի կողմից ակտիվացվել/տրամադրվել է Առևտրի/սպասարկման կետին պատկանող ՀԴՄ-ի միջոցով: Ընդ որում, այն Առևտրի/սպասարկման կետերի համար, որոնց POS ծառայությունն ակտիվացվել է մինչև 2022թ. հուլիսի 13-ը, նշված սակագները ուժի մեջ են մտնում 2022թ. հոկտեմբերի 1-ից:

	ք.Երևան	ՀՀ մարզային քաղաք	ՀՀ գյուղ
Նվազագույն ամսական վճար՝ (ՀՀ դրամ, ներառյալ հարկերը)	4,600	2,950	1,000

* Կիրառելի է այն դեպքում, երբ միջնորդավճարների ամսական հանրագումարը փոքր է նվազագույն ամսական վճարի չափից, որի պարագայում գանձվում է նվազագույն ամսական վճարի և միջնորդավճարների ամսական հանրագումարի տարբերության չափով: Նվազագույն ամսական վճարը կիրառվում է կազմակերպության համար ակտիվացված յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար:

	Միջնորդավճար
1. Ակրեդիտիվներ ստացված Հաճախորդի օգտին (վաճառողի ակրեդիտիվ)	
1.1. Ակրեդիտիվի կամ ակրեդիտիվի փոփոխության ծանուցում	20,000 ՀՀ դրամ
1.2. Ակրեդիտիվի տեքստի նախնական կազմում և ակրեդիտիվի պայմանների համաձայնեցում	20,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
1.3. Փաստաթղթերի ստուգում	35,000 ՀՀ դրամ
1.4. Ակրեդիտիվի հաստատում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից	Ըստ պայմանավորվածության
1.5. Ակրեդիտիվի ներքո «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից գեղչում/ֆինանսավորում	Ըստ պայմանավորվածության
1.6. Թողարկված ակրեդիտիվի կատարում /վճարում, ակցեպտավորում և նեգոցիացիա/	0.5%, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
1.7. Ակրեդիտիվի փոխանցում (transfer)*	Յուրաքանչյուր եռամսյակի** համար 0.15% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար
1.8. Թողարկող բանկի կողմից փոխհատուցման (Reimbursement) հրահանգի կատարում	Ըստ պայմանավորվածության
1.9. Փոխհատուցման (Reimbursement) պարտավորության ներքո վճարում	50,000 ՀՀ դրամ
2. Հաճախորդի պատվերով թողարկվող Ակրեդիտիվներ (գնորդի ակրեդիտիվ)	
2.1. Չհաստատված ակրեդիտիվի թողարկում*	Յուրաքանչյուր եռամսյակի** համար 0.15% (գանձվում է միանվագ՝ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար***
2.2. Այլ բանկի հաստատումով ակրեդիտիվի թողարկում	Յուրաքանչյուր եռամսյակի** համար 0.15% (գանձվում է միանվագ՝ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար, հաստատումը՝ ըստ պայմանավորվածության
2.3. Ակրեդիտիվի պայմանների փոփոխություն, այդ թվում, չեղյալ համարում	35,000 ՀՀ դրամ, ընդ որում ժամկետի երկարաձգման կամ գումարի ավելացման դեպքում ավելացված մասով կգանձվի նաև թողարկման միջնորդավճար
2.4. Ակրեդիտիվի ներքո վճարում կամ ակցեպտավորում	0.1%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.5. Փաստաթղթերի ստուգում («առանց տարաձայնությունների» փաստաթղթերի ստուգման համար)	35,000 ՀՀ դրամ

2.6. «Տարածայնություններով» փաստաթղթերի ստուգում	70,000.00 ՀՀ դրամ կամ համարժեք գործարքի արժույթ (եթե շահառուն ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր է), գանձվում է շահառուից
Այլ բանկերի միջնորդավճարները (բացառությամբ՝ հաստատման), փոստային/կապի ծախսերը գանձվում են ըստ դրանց փաստացի մեծության * Ակրեդիտիվի վաղաժամկետ դադարեցման դեպքում գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ ** ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ *** վարկային սահմանաչափի ներքո թողարկման դեպքում կգանձվի լրացուցիչ միջնորդավճար՝ ըստ պայմանավորվածության	

10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԿԱՍՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Միջնորդավճար
1. Հաճախորդի պատվերով թողարկվող Ինկասո (վաճառողի ինկասո)	
1.1. Ինկասո հանձնարարականի թողարկում	0.2%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 250,000 ՀՀ դրամ
1.2. Ինկասո հանձնարարականի փոփոխություն	25,000 ՀՀ դրամ
2. Հաճախորդի անունով թողարկված Ինկասո (գնորդի ինկասո)	
2.1. Ինկասո հանձնարարականի (կամ դրա փոփոխության) ծանուցում	15,000 ՀՀ դրամ
2.2. Ինկասո հանձնարարականի վճարում/ակցեպտավորում	0,1%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
Փոստային/կապի ծախսերը գանձվում են ըստ դրանց փաստացի մեծության	

11. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ*

	Միջնորդավճար
1. Երաշխիքների թողարկում	
1.1. Երաշխիքների թողարկում Ամերիաբանկի կողմից	
1.1.1. Դրամական միջոցների սառեցմամբ **	Յուրաքանչյուր եռամսյակի*** համար 0.3% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), գործողության ողջ ժամկետի համար նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ
1.1.2. Այլ միջոցների գրավադրմամբ **	Յուրաքանչյուր եռամսյակի*** համար 0.75% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար
1.1.3. Այլ միջոցների գրավադրմամբ** (պարզեցված գործընթացով՝ մինչև 50 մլն ՀՀ դրամ գումարի երաշխիքների դեպքում)	- մինչև 20 մլն ՀՀ դրամ գումարի Երաշխիքի դեպքում՝ միայն ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և պետական ընկերությունների**** կողմից հայտարարված մրցույթների/կնքվող պայմանագրերի***** շրջանակներում հետևյալ պայմաններով՝ ✓ Ապահովություն՝ Ամերիաբանկում

	գործող բանկային հաշիվներով շրջանառվող դրամական միջոցների գրավ, մասնակիցների /սեփականատերերի երաշխավորություն, ✓ Երաշխիքի թողարկման միջնորդավճար յուրաքանչյուր եռամսյակի*** համար 0.95% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար, ✓ Երաշխիքի առավելագույն ժամկետ՝ 2 տարի: • մինչև 50 մլն ՀՀ դրամ գումարի Երաշխիքի դեպքում՝ ✓ Ապահովություն՝ Ամերիաբանկում գործող բանկային հաշիվներով շրջանառվող դրամական միջոցների գրավ, մասնակիցների /սեփականատերերի երաշխավորություն և անշարժ գույք: ✓ Երաշխիքի թողարկման միջնորդավճար՝ յուրաքանչյուր եռամսյակի*** համար 0.75% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար ✓ Երաշխիքի առավելագույն ժամկետ՝ 2 տարի:
1.2. Գրավի փոփոխություն	Դրամական միջոցների սառեցմամբ թողարկված բանկային երաշխիքների գրավը այլ գրավով փոխարինելու դեպքում իրականացվում է թողարկման միջնորդավճարի գանձում՝ այլ գրավով ապահովված երաշխիքների համար սահմանված և դրամական միջոցների սառեցմամբ երաշխիքի թողարկման համար գանձված միջնորդավճարի տարբերության չափով
1.3. Երաշխիքի պայմանների փոփոխություն	35,000 ՀՀ դրամ, իսկ երաշխիքի գումարի ավելացման կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում ավելացված մասով կգանձվի նաև երաշխիքի թողարկման միջնորդավճար
1.4. Երաշխիքի դադարեցում՝ հաճախորդի հրահանգով	25,000 ՀՀ դրամ
1.5. Վճարում պահանջի դիմաց	Վճարվող գումարի 0.5%-ը, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
1.6. Անուղղակի երաշխիքներ/միջնորդ բանկի մասնակցությամբ թողարկված/	Ըստ պայմանավորվածության

2. Այլ բանկերի կողմից Հաճախորդի օգտին թողարկված Երաշխիքի սպասարկում	
2.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքի տրամադրում այլ բանկի կոնտր-երաշխիքի դիմաց	Ըստ պայմանավորվածության
2.2. Երաշխիքի կամ երաշխիքի փոփոխության ծանուցում	20,000 ՀՀ դրամ
2.3. Երաշխիքի ներքո հաճախորդի վճարման պահանջի կազմում	30,000 ՀՀ դրամ
Այլ բանկերի միջնորդավճարները (բացառությամբ՝ հաստատման), փոստային/կապի ծախսերը գանձվում են ըստ դրանց փաստացի մեծության * Սույն սակագները կիրառելի են նաև Պահուստային Ակրեդիտիվների(Standby LC) համար ** Երաշխիքի վաղաժամկետ դադարեցման դեպքում գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ *** Ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ **** Սույն դրույթի իմաստով ՀՀ պետական կառավարման համակարգի մարմին, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ և պետական ընկերություն են համարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկներն ու պետական ընկերությունները ***** Հաճախորդը պետք է ունենա աշխատանքների կատարման և/կամ ծառայությունների մատուցման առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ (յուրաքանչյուր տարվա համար առնվազն մեկ պայմանագիր)՝ ՀՀ պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ պայմանագրային իրավահարաբերությունների շրջանակներում	